



ՔՅԾԻԱ

ՔՕ ԱՄԻՑ ԻՅՑԻՔՄ

13 նոյեմբերի, Կիրակի:

Ըայրս ներեց ինձ, բայց ես դեռևս շատ տխուր էի: Մայրիկս ինձ ուղարկեց՝ մեր բարապանի մեծ տղայի հետ փողոցում զբոսնելու:

Մենք արդեն անցել էինք ճանապարհի կեսը և հավասարվել մի խանութի, որի դռան մոտ սայլակ էր կանգնած, երբ հանկարծ իմ անունը տվեցին: Ետ նայեցի. Կորետին էր՝ իմ դասարանական ընկերը՝ նույն դարչնագույն \$ու.\$այ կան: Կազին ու կատվամորթե բերետը գլխին, քրտնաթոր և ուրախ, գրկին՝ մի կապուկ փայտ: Սայլի վրա կանգնած մարդը մեկը մյուսի ետևից նրան էր տալիս փայտի կապուկները, իսկ տղան վերցնում ու տանում էր հոր խանութը:

– Ի՞նչ ես անում, Կորե՛տի,– հարցրի ես:

– Մի՞թե չես տեսնում, – պատասխանեց նա՝ ձեռքը մեկնելով հերթական փայտի կապուկին,– դասերս եմ սովորում:

Ես ծիծաղեցի, բայց նա լուրջ էր խոսում և հերթական կապուկը ուսին դնելով՝ վազելով մրմնջում էր. «Բայի խոնարհում կոչվում է... նրա փոփոխությունը դեմքով... դեմքով... թվով...»: Նա հասցրեց արդեն ցած գցել կապուկը. «...ժամանակով... ժամանակով...», որի ընթացքում կատարվել է գործողությունը»: Այստեղ նա վերադարձավ սայլի մոտ՝ նորից կապուկ վերցնելու. «...կախված եղանակից, որով արտահայտված է գործողությունը...»:

Դա մեր վաղվա քերականության դասն էր:

– Տեսնում ես,– ասաց նա,– զուր ժամանակ չեմ կորցնում: Հայրս մշակների

հետ գնացել է գործով, մայրս հիվանդ է, և ես ստիպված եմ բեռնաթափել սայլը: Չետն էլ կրկնում եմ քերականությունը: Այսօր դժվար դաս եմ հանձնարարել. գլուխս չի մտնում... Չայրս ասաց, որ կվերադառնա ժամը յոթին և այն ժամանակ կտա ձեր փողը,– ավելացրեց նա՝ դիմելով սայլապանին:

Սայլը մեկնեց:

– Մի թուպեով խանութ մտիր,– ասաց ինձ Կորետին:

Ներս մտա: Դա փայտով լի մի սենյակ էր: Անկյունում մեծ կշեռք էր դրված:

– Այսօր դժվար օր էր,– շարունակեց Կորետին,– և ես ստիպված եմ դասերս ընդհատումներով պատրաստելու: Չեց սկսեցի նախադասություններ գրել, գնորդներ եկան, հենց նոր էի կրկին նստել գրելու, սայլը եկավ: Այսօր առա վոտյան արդեն երկու անգամ վազել եմ Վենետիկի՝ իրապարակ, ուր գտնվում է փայտի շուկան: Չոգնածությունից ոտքերս չեն ենթարկվում, ձեռքերս էլ ուռել են:

Այս ասելիս Կորետին ավելում էր աղյուսե հատակին թափված չոր տերևներն ու տաշեղները:

– Իսկ որտե՞ղ ես գրում, Կորե՛տի,– հարցրի ես:

– Իհա՛րկե ոչ այստեղ,– պատասխանեց նա:– Արի տե՛ս:

Եվ նա ինձ տարավ խանութի ետևում գտնվող սենյակը. այդ փոքր սենյակը միաժամանակ և՛ խոհանոց էր, և՛ ճաշասենյակ: Պատի մոտ սեղան էր դրված, վրան գրքեր ու տետրեր կային, որոնցից մեկը բացված էր:

– Դեռ չեմ ավարտել երկրորդ հարցի պատասխանը,– ասաց նա և վերջ նելով գրիչը՝ իր գեղեցիկ ձեռագրով սկսեց գրել. «Կաշվից պատրաստում են կոշիկներ, գոտիներ, ճամպրուկներ...» :

– Այստեղ որևէ մեկը կա՞,– այդ թուպեին լսվեց խանութից. մի կին էր եկել՝ փայտ գնելու:

– Գալի՛ս եմ,– ձայն տվեց Կորետին, դուրս թռավ սենյակից, կշեռք փայտը, ստացավ դրամը, վազեց դեպի անկյունը, մատյանի մեջ գրանցեց ստացած գումարը և վերադարձավ իր գրավոր աշխատանքին:

– Տեսնե՞նք կհաջողվի՞ ավարտել նախադասությունը:

Նա վերցրեց գրիչն ու ավելացրեց. «...ճամփորդական պայուսակներ, զին վորների համար ուսապարկեր...»:

– Վա՛յ,– գոչեց նա հանկարծ,– սուրճը եփվեց,– ու վազեց վառարանի մոտ՝ սրճեփը կրակի վրայից վերցնելու:

– Սուրճը մայրիկիս համար է,– ասաց նա:– Ստիպված եղա եփել սովորել: Արի միասին տանենք մայրիկիս. նրա համար հաճելի կլինի քեզ տեսնել: Ար դեն վեց օր եղավ, ինչ նա անկողնում է... «...բայի խոնարհումը...»: Ես միշտ մատներս այրում եմ այս սրճեփը վերցնելիս... Գնանք մայրիկիս մոտ:

Նա բաց արեց դուռը, և մենք մտանք մի ուրիշ փոքրիկ սենյակ:

Մեծ մահճակալին պառկել էր Կորետիի մայրը: Գլուխը փաթաթված էր սպի տակ գլխաշորով:

– Ահա՛ սուրճը, մայրի՛կ,– ասաց Կորետին՝ գավաթը նրան մեկնելով,– իսկ այս տղան մեր դասարանից է:

– Ի՞նչ բարի եք, սինյորի՛նո, որ եկել եք հիվանդիս այցելության,– ասաց նա:

Այդ ժամանակ Կորետին ուղղեց մոր մեջքի տակ դրված բարձը, հետո՝ վերմակը, փայտ նետեց վառարանը ու կատվին քչեց վառարանի վրայից:

– Քեզ այլևս ոչինչ պետք չէ՞, մայրի՛կ,– մոր ձեռքից վերցնելով գավաթը՝ հարցրեց նա:– Երկու գդալ դեղը խմե՞լ ես: Երբ վերջանա, նորից կվազեմ դե դատուն: Փայտը դատարկված է: Ժամը չորսին միսը կդնեմ կրակին, ինչպես ասել ես, իսկ երբ գա յուղ վաճառողը, ես նրան կտամ ութ սուրճ ³: Ամեն ինչ կարգին կլինի, չանհանգստանաս:

– Շնորհակա՛լ եմ, տղա՛ս,– պատասխանեց մայրը: – Խե՞ղճ տղա, ստիպված ես ամեն ինչի համար հոգ տանել:

Չետո Կորետին ցույց տվեց հոր նկարը՝ զինվորի համազգեստով, արիու թյան մեդալը կրծքին: Նա նույն դեմքն ուներ, ինչ՝ որդին, նույն վառվուն աչքերը և նույն ուրախ ժպիտը:

– Վերադառնանք խոհանոց, որ մի երկու բառ էլ գրեմ: Մնացածը կա վարտեմ երեկոյան. ուշ կպառկեմ քնելու: Ի՞նչ երջանիկ ես, որ կարող ես ազատ

պարապել ու դեռ ման գալ ուզածիդ չափ:

Ինչպես միշտ՝ Նա ուրախ ու ժիր վերադարձավ խանութ, սկսեց փայտերը մեկը մյուսի ետևից դնել իշոտնուկին ու սղոցել՝ ասելով.

– Սա իմ մարգանքն է: Ուզում եմ մինչև հայրիկիս գալը այս բոլոր փայտերը սղոցած լինել. ա՛յ թե կուրախանա: Վատն այն է միայն, որ փայտ սղոցելուց հետո ես այնպիսի ա և ու եմ գրում, որոնք, ինչպես ուսուցիչն է ասում, օձի են նմանվում: Բայց ինչ արած, ես նրան կասեմ, որ ստիպված եմ եղել աշխատել ձեռքերով: Կարևորն այն է, որ մայրիկս շուտ առողջանա: Այսօր, փա՛ռք Աստծու, լավ է: Քերա կանության մի մասը առավոտյան կտվորեմ. քաղաղների հետ վեր կկենամ: Ահա և փայտով լի սայլը: Դե ես գործի անցա:

Լիքը բարձած սայլը կանգ առավ խանութի առաջ: Կորետին դուրս վազեց՝ սայլապանի հետ խոսելու, և նորից վերադարձավ:

– Այժմ ես զբաղված կլինեմ, – ասաց Նա: – Յտեսություն՝ ն, մինչև վաղը: Ի՛նչ լավ է, որ եկար ինձ մոտ, դե՛, իսկ այժմ գնա գրոսնի՛ր, բախտավո՛ր տղա:

Նա սեղմեց ձեռքս և սկսեց փայտը սայլից խանութ կրել: Նա այնպիսի ճարպկությամբ էր գործ անում, որ հաճելի էր նրան Նայելը: Նրա պայծառ դեմքը շառագունել էր կատվամորթե գլխարկի տակ:

«Բախտավոր տղա» ասաց ինձ: Օ՛, ո՛չ, Կորե՛տի, ո՛չ: Դու ինձնից ավելի բախտավոր ես, որովհետև դու սովորում և աշխատում ես ավելի շատ, քան ես, որովհետև դու ավելի շատ ես օգնում քո ծնողներին, որովհետև դու ինձանից լավն ես, հարյուրապատիկ լավը. դու իսկական կտրիճ ես:

¹ \$ու.\$այկա - գործած՝ գործովի տաք շապիկ

² Վենետիկ - քաղաք Իտալիայում

³ սղոցող - դրամի միավոր Իտալիայում՝ մետաղյա մանրադրամ